

**5.11. Կենդանաբանական այգու գործունեություն**

ՀՀ-ում գործող միակ պետական կենդանաբանական այգուն 2002թ. տարեվերջի դրությամբ առկա է եղել 204 տեսակի կենդանի և թռչուն (2.5%-ով ավել, քան 2001թ. տարեվերջին): Կենդանիների և թռչունների գլխաքանակը կազմել է 2272 (2001թ`. 3044):

**Կենդանիների քանակը տարեվերջին**

	Տեսակների քանակը				Գլխաքանակը			
	1999	2000	2001	2002	1999	2000	2001	2002
Երկկենցաղ	1	1	2	35	1	1	2	54
Սողուններ	18	18	19	2	141	148	152	2
Կաթնասուններ	41	54	56	51	502	154	170	135
դրանցից՝ գիշատիչներ	24	28	29	25	67	60	65	49
սմբակավորներ	17	26	27	26	98	94	105	86
Չկներ	7	17	17	23	156	201	228	236
Թռչուններ	71	68	70	68	489	508	620	608
դրանցից՝ գիշատիչներ	13	13	15	15	60	62	68	72
Այլ	35	35	35	25	1048	1914	1872	1237
Ընդամենը	173	193	199	204	2337	2926	3044	2272

Կենդանաբանական այգուն բնակվող 33 տեսակի 104 կենդանիներ և թռչուններ գրանցված են միջազգային «Կարմիր գրքում», իսկ 48 տեսակի 124 կենդանիներ ու թռչուններ՝ Հայաստանի «Կարմիր գրքում»: Միջազգային «Կարմիր գրքում» ընդգրկված՝ կենդանաբանական այգուն բնակվող կենդանիների քանակի գերակշռող մասը բաժին է ընկել կաթնասուններին՝ 51.9%, իսկ Հայաստանի «Կարմիր գրքում»՝ երկկենցաղներին, 48.4% :

**Կենդանաբանական այգու կենդանիների քանակական շարժը**

	Վերաբնակեցված (այլ ճանապարհով ձեռք բերված)		Վաճառված		Ծնված		Կենդանիների անկում	
	տեսակ-ների քանակը	գլխաքա-նակը	տեսակ-ների քանակը	գլխաքա-նակը	տեսակ-ների քանակը	գլխաքա-նակը	տեսակ-ների քանակը	գլխաքա-նակը
Սողուններ	-	-	-	-	4	18	3	3
Կաթնասուններ	11	35	3	7	11	20	6	12
դրանցից՝ գիշատիչներ	-	-	-	-	5	7	4	9
սմբակավորներ	11	35	3	7	6	13	2	3
Չկներ	10	87	-	-	-	-	-	-
Թռչուններ	14	120	7	37	13	194	5	11
դրանցից՝ գիշատիչներ	-	-	-	-	-	-	-	-
Այլ	-	-	3	100	4	394	-	-
Ընդամենը	35	242	13	144	32	626	14	26

Կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսը կազմել է 8.5 հա, իսկ կենդանիների համար նախատեսված կառույցների մակերեսը՝ 5.2 հա, որն ընդհանուր մակերեսի 61.2%-ն է: Կենդանիների համար նախատեսված ձմեռային կառույցների մակերեսը կազմել է 2.0 հա, որը կենդանիների համար նախատեսված կառույցների ընդհանուր մակերեսի 38.5%-ն է և կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսի 23.5%-ը:

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱՊԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

Մեկ կենդանուն բաժին է ընկել 22.9 քառ. մ կառույց՝ 2001թ. 17.1 քառ. մ-ի դիմաց: Կենդանաբանական այգու ընդհանուր տարածքի մեկ հա-ին բաժին է ընկել 267 կենդանի և թռչուն (2001թ.՝ 358):

Այգու աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 101 մարդ, որոնցից 88-ը՝ հիմնական, 13-ը՝ պայմանագրային հիմունքներով աշխատողներ են:

2002թ. կենդանաբանական այգի այցելած հաճախորդների թվաքանակը 2001թ. համեմատ 9.1%-ով նվազել է և կազմել 100 հազ. (2001թ.՝ 110.0 հազ.): Հանրապետության 1000 բնակչի հաշվով այցելությունը կազմել է 31.3:

2002թ. ընթացքում կենդանաբանական այգում կազմակերպվել է 2500 էքսկուրսիա, որի 27.2%-ը՝ դպրոցականների համար: էքսկուրսիաներին մասնակցել է 80.0 հազ. այցելու, նրանց 65.0%-ը՝ դպրոցականներ (2001թ.՝ 85.0 հազ. այցելու և 57.7%): Կենդանաբանական այգու 6100 այցելուների համար կազմակերպվել է 320 դասախոսություն (2001թ.՝ 6500 այցելու և 350 դասախոսություն):

2002թ. կենդանաբանական այգու ֆինանսական մուտքերը կազմել են 86.4 մլն. դրամ (2001թ. համեմատ դրանք աճել են 4.3%-ով), որից 70.6 մլն. դրամը՝ պետական բյուջեից (2001թ.՝ 70.5 մլն. դրամ), 9.0 մլն. դրամը՝ մուտքի վճարումներից (2001թ.՝ 6.5 մլն. դրամ) և 6.8 մլն. դրամը՝ նվիրատվություններից (2001թ.՝ 5.7 մլն. դրամ): Մուտքի վճարը մեկ այցելուի հաշվով կազմել է միջինը 450 դրամ, 2001թ. 260 դրամի դիմաց:

**Ֆինանսական միջոցների օգտագործումը**

	Ընդամենը, մլն. դրամ	2002թ. ցուցանիշների աճը կամ նվազումը 2001թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %
Նյութական ծախսեր	48.7	4.3
Ոչ նյութական ծառայությունների վճարումներ	4.7	20.5
Գործուղման ծախսեր	1.0	42.8
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	17.7	- 4.3
Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ	5.3	0
Կապիտալ ներդրումներ, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	8.9	18.7
Ընդամենը	86.3	4.4